<<ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ԵՎ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ՀԻՄՆԱՆՈՐԱԳՄԱՆ ԱԽՇԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՔ-ԳՀԱՇՁԲ-05-18

ք. Արմավիր 06.03. 2018թ.

Արմավիրի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ռ. Խղաթյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Արտշին 1>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-Ի շենքի տանիքի և սանհանգույցի հիմնանորագման ախշատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.04.2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը

վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 90 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տաս աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 5760000 (հինգ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 960000 (ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2018 թվականի ապրիլի 30-ը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ	**<<ԱՐՏՇԻՆ 1>> ՍՊԸ**
Ք. ԱՐՄԱՎԻՐ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 32	**Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Փ. 9**
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	**«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ, ԴԱՎԹԱՇԵՆ Մ/Ճ**
Հ/Հ 900332201483, ՀՎՀՀ 04401882	**Հ/Հ 11811006695800, ՀՎՀՀ 01277633**
---------- Ռ. ԽԼՂԱԹՅԱՆ	**---------- Ա. ԴԱՎԹՅԱՆ**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
06.03. *2018թ. կնքված*
ԱՔ-ԳՀԱՇՁԲ-05-18 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

<<ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ԵՎ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ՀԻՄՆԱՆՈՐԱԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

h/h	հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը ՀՀ հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
1	Р23-174	Փայտյա դռան տեղահանում	100 քմ	0,03	92,7	2,78
2	Р11-94	Պատերի վրայից և բացվածքների թեքություններից գաջի սվաղի քանդում	100 քմ	0,24	21,2	5,09
3	Р14-320	Պատերի և առաստաղի վրայից հին ներկի մաքրում	100 քմ	0,4	12,3	4,92
4	13-4	Կերամիկական սալերի քանդում	քմ	42	0,6	25,20
5	Р 21-43	Ակոսների բացում հաղորդալարի համար	գծմ	20	0,2	4,00
6	Р 23-111	Խոռոչների փորում անջատիչների և վարդակների համար	հատ	2	1,8	3,60
7	Е46-98	Տանիքի գոյություն ունեցող ազբոշիֆերի ծածկույթի քանդում երկհարկանի մասում	100 քմ	5,84	15,8	92,27
8	Е46-96	Նույնը թիթեղյա մասերի	100 քմ	3,56	7,7	27,41
9	R8-186	Ջրահեռացման խողովակների ապամոնտաժում ներառյալ ջրհոս ձագարները	գծմ	48	0,1	4,80
10	Р23-77 Р23-229 310-5	Քանդած շին. աղբի հավաքումը, բարձումը ա/մ և տեղափոխումը 5 կմ հեռավ. Վրա	տն	7,5	2,9	21,75
		Կառուցման աշխատանքներ				
11	Р5-85 Р5-86 q=2	Հատակի տակ բետոնե հարթեցնող շերտի իրականացում ցեմենտի շաղախով 30 մմ հաստության	100մ^2	0,17	95,5	16,24
12	11-188	Պատերի գաջե սվաղի նորոգում	քմ	7	2,7	18,90

13	Р 11-188	Թեքությունների սվաղումը գաջե շաղախով	քմ	2	2,9	5,80
14	11-64	Առաստաղների գաջե սվաղի նորոգում	քմ	3,5	3	10,50
15	15-664 15-665 Q=0,5	Պատերի և առաստաղի ներկում բարձրորակ լատեքսային ներկով	քմ	41	1,2	49,20
16	15-200	Ներքին պատերի սվաղ ց/ավազե շաղախով	քմ	25,6	1,1	28,16
17	Р 13-138	Պատերի երեսապատում կերամիկական հաղճասալերով	քմ	25,6	5,4	138,24
18	Р 5-115	Հատակների երեսապատում կերամիկական սալերով	քմ	16,7	4,9	81,83
19	15-123	Լամինատե հատակի իրականացում 8 մմ հաստ, լամինատով	քմ	55,4	4,1	227,14
20	Ի.Տ.	Մետաղապլաստե սպիտակ պրոֆիլներից դռան տեղադրում	քմ	3,2	29	92,80
21	Р 17-20	Կերամիկական ոտնակով լվացարանի տեղադրում	կտ	5	12,3	61,50
22	Р 17-61	Կերամիկական զուգարանակոնքի տեղադրում	հատ	4	21,4	85,60
23	8-591-5	Միաստեղնավոր միաբևեռ անջատիչի տեղադրում	100 հատ	0,02	102,9	2,06
24	Ի. Տ	Բաժանման տուփ	հատ	2	0,56	1,12
25	8-402-2	ՊՊՎԳ 2x2,5 մմ էլ-լարի մոնտաժում սվաղի տակ	100 գծմ	0,1	39,1	3,91
26	8-402-2	Նույնը 2*1,5	100գծմ	0,1	32,7	3,27
27	8-605	Լումինեսցենտային լուսատուների տեղադրում 2*60	հատ	2	6,2	12,40
		Տանիք				
28	Е12-270	Տանիքի ծածկույթի պատրաստում ազբոշիֆերով	քմ	426	2,6	1107,60
29	Շուկա	Հենակներ մետաղական թերթից 2x200	կգ	181	0,3	54,30
30	Е12-278	Ջրհորդանի պատրաստում ցինկապատ 0,55 մմ հաստությամբ թիթեղից	գծմ	202	4,3	868,60

31	E12-280	Գագաթամասի պատրաստում ցինկապատ հարթ 0,55 մմ հաստությամբ թիթեղից	քմ	53,4	3	160,20
32	Շուկա	Կեռ մետաղական թերթից 2x200	կգ	13,4	0,3	4,02
33	R8-191	Ջրահեռացման խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղից L=6 մ ներառյալ ջրհոս ձագարները	կտ	3	16,4	49,20
34	R8-191	Նույնը L=3 մ	հատ	10	11,7	117,00
35	Շուկա	Բետոնի մեխ L = 40 մմ	հատ	32	0,03	0,96
36	Շուկա	Ցինկապատ թիթեղ D = 0,55 մմ, H = 30 մմ, L = 450 մմ ջրահեռացման խողովակների ամրացման համար	հատ	32	0,033	1,06
37	Շուկա	Ինքնապարուրակվող հեղույս	հատ	64	0,02	1,28
38	E12-280	Ձեղնապատուհանների պատում 0,55 մմ ցինկապատ թիթեղով	քմ	20	3	60,00
39	P 8-159	Ազբոշիֆերի տանիքի փոխում նոր նյութի ավելացումով մինչև 50 %	քմ	380	1,3	494,00
40	P 8-3	Փայտե հենակների փոխում	գծմ	32	3,8	121,60
41	P 8-6	Փայտե ծպեղնատքերի ուղղում	գծմ	77	8,3	639,10
42	P 8-13	Կավարամածի փոխում նոր նյութի ավելացումով մինչև 25 %	քմ	151	0,6	90,60

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 4800000
ԱԱՀ՝ 960000
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 5760000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Ք. ԱՐՄԱՎԻՐ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 32
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332201483, ՀՎՀՀ 04401882

---------- Ռ. ԽԼՂԱԹՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԱՐՏՇԻՆ 1>> ՍՊԸ
Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Փ. 9
«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ, ԴԱՎԹԱՇԵՆ Մ/Ճ
Հ/Հ 11811006695800, ՀՎՀՀ 01277633

---------- Ա. ԴԱՎԹՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2
06.03. *2018թ. կնքված*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
<<ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ԵՎ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ՀԻՄՆԱՆՈՐԱԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Փայտյա դռան տեղահանում, Պատերի վրայից և բացվածքների թեքություններից գաջի սվաղի քանդում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	13.03.2018թ
2	Պատերի և առաստաղի վրայից հին ներկի մաքրում, Կերամիկական սալերի քանդում, Ակոսների բացում հաղորդալարի համար, Խոռոչների փորում անջատիչների և վարդակների համար	14.03.2018թ	16.03.2018թ
3	Տանիքի գոյություն ունեցող ազբոշիֆերի ծածկույթի քանդում երկհարկանի մասում Նույնը թիթեղյա մասերի Ջրահեռացման խողովակների ապամոնտաժում ներառյալ ջրհոս ձագարները	19.03.2018թ	23.03.2018թ
4	Քանդած շին. աղբի հավաքումը, բարձումը ա/մ և տեղափոխումը 5 կմ հեռավ. Վրա, Մետաղապլաստե սպիտակ պրոֆիլներից դռան տեղադրում	26.03.2018թ	26.03.2018թ
5	Հենակներ մետաղական թերթից 2x200, Ջրհորդանի պատրաստում ցինկապատ 0,55 մմ հաստությամբ թիթեղից, Կեռ մետաղական թերթից 2x200	26.03.2018թ	02.04.2018թ
6	Հատակի տակ բետոնե հարթեցնող շերտի իրականացում ցեմենտի շաղախով 30 մմ հաստության, Պատերի գաջե սվաղի նորոգում, Թեքությունների սվաղումը գաջե շաղախով, Առաստաղների գաջե սվաղի նորոգում, Ներքին պատերի սվաղ ց/ավազե շաղախով, Բաժանման տուփ, ՊՊՎԳ 2x2,5 մմ էլ-լարի մոնտաժում սվաղի տակ, Նույնը 2*1,5	27.03.2018թ	02.04.2018թ
7	Պատերի երեսապատում կերամիկական հաղճասալերով	02.04.2018թ	04.04.2018թ
8	Պատերի և առաստաղի ներկում բարձրորակ լատեքսային ներկով, Լամինատե հատակի իրականացում 8 մմ հաստ, լամինատով, Տանիքի ծածկույթի պատրաստում ազբոշիֆերով, Գագաթամասի պատրաստում ցինկապատ հարթ 0,55 մմ հաստությամբ թիթեղից, Ձեղնապատուհանների պատում 0,55 մմ ցինկապատ թիթեղով	02.04.2018թ	13.04.2018թ
9	Հատակների երեսապատում կերամիկական սալերով	05.04.2018թ	06.04.2018թ
10	Ջրահեռացման խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղից L=6 մ ներառյալ ջրհոս ձագարները, Բետոնի մեխ L = 40 մմ, Ցինկապատ թիթեղ D = 0,55 մմ, H = 30 մմ, L = 450	16.04.2018թ	16.04.2018թ

	մմ ջրահեռացման խողովակների ամրացման համար, Ինքնապարուրակվող հեղույս		
11	Կերամիկական ոտնակով լվացարանի տեղադրում Կերամիկական զուգարանակոնքի տեղադրում Միաստեղնավոր միաբևեռ անջատիչի տեղադրում	16.04.2018թ	20.04.2018թ
12	Փայտե հենակների փոխում Փայտե ծպեղնատոքերի ուղղում Կավարամածի փոխում նոր նյութի ավելացումով մինչև 25 %	17.04.2018թ	20.04.2018թ
13	Նույնը L=3 մ Ազբոշիֆերի տանիքի փոխում նոր նյութի ավելացումով մինչև 50 %	18.04.2018թ	30.04.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	**30.04.2018թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Ք. ԱՐՄԱՎԻՐ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 32
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332201483, ՀՎՀՀ 04401882

---------- Ռ. ԽԼՂԱԹՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԱՐՏՇԻՆ 1>> ՍՊԸ
Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Փ. 9
«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ, ԴԱՎԹԱՇԵՆ Մ/Ճ
Հ/Հ 11811006695800, ՀՎՀՀ 01277633

---------- Ա. ԴԱՎԹՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
06.03. *2018թ. կնքված*
ԱՔ-ԳՀԱՇՁԲ-05-18 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45211228	<<ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ԵՎ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ՀԻՄՆԱՆՈՐԱԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ			5760000	5760000									**5760000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Ք. ԱՐՄԱՎԻՐ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 32
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հ/Հ 900332201483, ՀՎՀՀ 04401882

---------- Ռ. ԽԼՂԱԹՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԱՐՏՇԻՆ 1>> ՍՊԸ
Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Փ. 9
«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ, ԴԱՎԹԱՇԵՆ Մ/Ճ
Հ/Հ 11811006695800, ՀՎՀՀ 01277633

---------- Ա. ԴԱՎԹՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 4
06.03. *2018թ. կնքված*
ԱՔ-ԳՀԱՇՁԲ-05-18 *ծածկագրով պայմանագրի*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ	**<<ԱՐՏՇԻՆ 1>> ՍՊԸ**
Ք. ԱՐՄԱՎԻՐ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 32	**Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Փ. 9**
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	**«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ, ԴԱՎԹԱՇԵՆ Մ/Ճ**
Հ/Հ 900332201483, ՀՎՀՀ 04401882	**Հ/Հ 11811006695800, ՀՎՀՀ 01277633**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **<<ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ԵՎ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ՀԻՄՆԱՆՈՐԱԳՄԱՆ ԱԽՇԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__06__» «մարտի» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ ԱՔ-ԳՀԱՇՁԲ-05-18
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ-ապրանքագիրը կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ-ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
06.03. *2018թ. կնքված*
ԱՔ-ԳՀԱՇՁԲ-05-18 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն